

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՏԱԿԱՐԳՈՒՄ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒՂ

Վիկտորյա Հակոբջանյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ
գարգացման և բարեփոխումների գծով փոխստորեն*

Առողջապահական իրավունքի էությունը: Իրավական կարգավորման մեխանիզմի նպատակն է ապահովել իրավունքի սուբյեկտների շահերի բավարարման գործում առաջացած խոչընդոտների հաղթահարումը¹: Որոշակի սոցիալական հարաբերությունների իրավական կարգավորման էությունը հասկանալու համար հարկ է ուսումնասիրել դրա առարկան կամ ոլորտը: Իրավական կարգավորման շրջանակը մշտապես փոփոխվում է, այն էլ՝ դինամիկ տեմպերով: Այս գործընթացը կախված է հասարակության և նրա ինստիտուտների կայունությունից:

Պայմանականորեն կարելի է առանձնացնել իրավական կարգավորման հետևյալ փուլերը.

- իրավական կարգավորման անհրաժեշտության «գիտակցում» փուլ,
- հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի «ներդրում» փուլ,
- «փոխազդեցություն» փուլ և իրավական նորմերի իմպլեմենտացում:

Առաջին փուլում պետությունը և հասարակությունը հանգում են այն եզրակացության, որ անհրաժեշտ է փոխել, արգելել և/կամ վերահսկել գարգացող իրավահարաբերությունները, որի դեպքում սկսվում է իրավական նորմերի ստեղծման դինամիկ գործընթաց:

Երկրորդ փուլը բնութագրվում է իրավական նորմերով սահմանված լիազորությունների իրականացմամբ:

Վերջին փուլում հնարավոր է հասնել իրավական կարգավորման նպատակին:

Վերը նշված փուլերին համապատասխան առանձնանում են նաև իրավական կարգավորման տարրեր՝ գործող իրավահարաբերությունների վրա հիմնված իրավական նորմեր, սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների իրացումը երաշխավորող իրավական ակտեր²: Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման արդյունավետությունը գնահատվում է ձևավորվող հասարակական հարաբերությունների վրա նորմերի ազդեցության արդյունքներով: Հասարակության և պետության նպատակներն ու խնդիրները իրավական կարգավորման օգնությամբ արդյունավետ իրականացնելու համար, որպես կանոն, հստակեցվում և մանրամասնվում են ներպետական իրավունքի ճյուղերում: Այնպես որ, օրինակաչության վերականգնումը, հանրային վտանգավոր արարք կատարող անձին պատժելը, հանցագործությունների կանխարգելումը լուծվում են քրեական իրավունքի շրջանակներում. էկոլոգիական իրավունքի շրջանակներում դա բարենպաստ կենսամիջավայրի ստեղծումն ու պահպանումն է, բժշկության մեջ՝ քաղաքացիների և ընդհանուր առմամբ հասարակության առողջության պահպանումը և ամրապնդումը:

¹ Տե՛ս Ս. Խաչատրյան «Պետության և իրավունքի տեսություն. Հարցեր և պատասխաններ», «Կախա», 2008, Երևան, էջ 144:

² Տե՛ս **Бобылев А.И.** Механизм правового воздействия на общественные отношения // Государство и право. – 1999. – №5. – С. 108.

Առողջապահական իրավահարաբերությունները այնպիսի հասարակական հարաբերություններ են, որոնց հիմնական օբյեկտը մարդու կյանքն ու առողջությունն է: Այս հարաբերությունների առանձնահատուկ բնույթն ու բովանդակությունը, ինչպես նաև դրանց դերն ու նշանակությունը կանխորոշում են օբյեկտիվ շահագրգռվածություն դրանց իրավական կարգավորման մեջ:

Քննարկվող իրավահարաբերությունների իրավակարգավորման առարկայի հարցը սերտորեն կապված է առողջապահական իրավահարաբերությունների էության, բովանդակության և այդ իրավահարաբերություններն ընդգրկող շրջանակի հետ:

Մասնագիտական գրականության մեջ կան տարբեր տեսակետներ պացիենտների ու բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների (ինչպես նաև բուժաշխատողների) միջև բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու հետ կապված հարաբերությունների իրավական բնույթի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, այս հարցի լուծումը էական նշանակություն ունի պացիենտի իրավական կարգավիճակի, կողմերի իրավունքների, պարտականությունների և իրավական պատասխանատվության ամրագրման առումով:

Որոշ հեղինակներ կարծում են, որ առողջապահության համակարգը՝ որպես սոցիալական ոլորտ, իրավական կարգավորման օբյեկտ է, «որի առանցքը սահմանադրական իրավունքի նորմերն են»,¹ այլ հեղինակներ կարծում են, որ այդ հարաբերությունները վարչաիրավական բնույթ են կրում, այսինքն՝ հանրային են, և միայն այն դեպքում, երբ պացիենտին պատճառվում է նյութական վնաս, կարող են ծագել քաղաքացիաիրավական հարաբերություններ՝ փոխհատուցելու պացիենտին հասցված վնասը²:

Առաջին դիրքորոշումը հիմնավորվում է այն բանով, որ քաղաքացիների առողջության պահպանման և բժշկական օգնություն ստանալու իրավունքները սահմանադրական են. քաղաքացիների այս իրավունքները ամրագրված են սահմանադրական մակարդակով, ինչը վկայում է դրանց կարևորության մասին հասարակության և պետության համար: Այնուամենայնիվ առողջության պահպանման և բժշկական օգնություն ստանալու ինստիտուտները համակարգային են, ինչպես ՀՀ օրենսդրության իրավական ինստիտուտների մեծ մասը: Դրանք ընդգրկում են իրավունքի նորմերը, որոնք լիազորող են (սահմանադրական իրավունքի նորմեր), կարգավորող և պահպանիչ:

Երկրորդ դիրքորոշումը հիմնավորվում է հետևյալ կերպ. քննարկվող հարաբերությունները պետական հատուկ գործառնության հանրային առողջության պահպանության իրականացումն են: Այսպես օրինակ՝ հանրային առողջապահության ոլորտում առողջապահության ոլորտի լիազոր մարմնի սահմանած կանոնակարգերը, սանիտարական կանոնները բխում են «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Սակայն հանրային առողջության պահպանումը միայն մի մասն է առողջապահական իրավունքը որպես հանրային իրավունք դիտարկելու: Հիմնականում նման հիմնավորման արձանատիները շատ ավելի խորն են, քան հնարավոր է պատկերացնել: Դրանք իրենց ամրապնդումը ստացել են դեռևս խորհրդային տարիներին, երբ հանրային շահերը մշտապես գերադասվում էին մասնավոր շահերին: Պատճառն այն էր, որ խորհրդային իրավաբանական գրականության մեջ հնարավորինս նվազագույնի էր

¹ Տե՛ս **Косолапова Н.В.** Конституционное обеспечение права граждан на медицинскую помощь: Автореф. дис... канд. юрид. наук. – Саратов, 2000. – С. 5.

² Տե՛ս **Ярошенко К.Б.** Имущественная ответственность лечебных учреждений за вред, причиненный их работниками // Вопросы государства и права. Вып. 2. – Минск, 1970. – С. 217; **Новоселов В.П.** Административно-правовые проблемы управления здравоохранением в субъектах Федерации: Автореф. дис... д-ра юрид. наук. – Екатеринбург, 1999. – С. 4, 12.

հասցվում ինչպես այն ամենը, ինչ կապված էր մասնավոր շահի, և առհասարակ մասնավոր իրավունքի հետ: Համարվում էր, որ այս համակարգում քաղաքացիների անձնական շահերը պետք է ստորադասվեն հավաքական շահերին, իսկ դրանք, իրենց հերթին, ամբողջ ժողովրդի շահերին¹:

Նման մոտեցումը ցույց տվեց իր անարդյունավետությունը, քանի որ առողջապահական համակարգի կենտրոնացումը առաջացրեց առողջապահական համակարգի ճգնաժամ, ինչի մասին վկայեցին 2020թ.-ի նոր կորոնավիրուսային հիվանդացության տարածման հետևանքով առաջացած համավարակի հետ կապված բացթողումներն ու բարդությունները:

Ներկայումս վարչաիրավական հարաբերություններն առկա են առաջին հերթին առողջապահության կառավարման տիրույթում գործադիր մարմինների միջև, ինչպես նաև հանրային առողջապահությանը վերաբերող հարցերում: Հիմնականում դրանք ուղղահայաց բնույթ ունեն:

Որոշ դեպքերում վարչական իրավահարաբերությունները կարող են առաջանալ ոչ թե ուղղահայաց, այլ հորիզոնական, օրինակ՝ համատեղ միջոցառումների անցկացման դեպքում: Այսպիսով, ժամանակակից իրողությունները հաստատում են մի կողմից հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից՝ մասնավոր իրավահարաբերությունների հետագա զարգացման հրամայականը, քաղաքակիրթ ձևերով անհատի շահերի պաշտպանությունը:

Նախ՝ և՛ հանրային, և՛ մասնավոր իրավունքը թեև տարբեր, բայց ՀՀ գործող Սահմանադրության վրա հիմնված միասնական իրավական համակարգի մասեր են:

Երկրորդ՝ մասնավոր և հանրային իրավունքի նորմերը ազդում են նույն օբյեկտների վրա և հաճախ հիմնված են նույն փաստական կազմի վրա:

Երրորդ՝ քաղաքացիական շրջանառության կայուն գործունեության պայմաններ ապահովելու համար անհրաժեշտ է հստակեցնել դրա մասնակիցների իրավական կարգավիճակը, նրանց իրավասուբյեկտիվության և գործողության սահմանները, որոնք նաև որոշում են քաղաքացիական իրավունքի մի շարք նորմերի հանրային բնույթը²:

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Այսպիսով, մասնավոր և հանրային շահերի հավասարակշռությունը կօգնի կանխել կամ գոնե հարթել հասարակության մեջ առաջացող սոցիալական կոնֆլիկտները, ավելի պատշաճ ձևով կարգավորել ինչպես գույքային, այնպես էլ անձնական ոչ գույքային իրավունքները, խնդրո առարկա հանրային հարաբերությունների սուբյեկտների օրինական շահերը:

Կարելի է եզրակացնել, որ վարչաիրավական տեսությունը չի կարող կիրառվել անձանց բժշկական օգնություն տրամադրելու հարաբերություններում³:

Այս դիրքորոշումը, մեր կարծիքով, արտացոլված է գործող օրենսդրության մեջ: Այսպես, «Բնակչության սանիտարահամաձարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները վերաբերում են հանրային

¹ Տե՛ս **Свердлык Г.А.** Гражданско-правовые способы сочетания общественных, коллективных и личных интересов. – Свердловск, 1980. – С. 19.

² Տե՛ս **Мохов А. А.** Медицинское право (правовое регулирование медицинской деятельности), Волгоград, 2003, стр. 36.

³ Տե՛ս **Малеина М.Н.** Человек и медицина в современном праве. – М., 1995. – С. 27.

առողջապահության և առողջապահության ոլորտում քաղաքականություն մշակող մարմինների գործունեությանը, սակայն կրում են վարչահրամայական բնույթ, իսկ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի իրավադրույթները պարունակում են այնպիսի կարգավորումներ, որոնք առավելապես հաստատում են պացիենտի, բուժաշխատողների, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կարգավիճակը, իրավունքների և պարտականությունների ծավալը և բովանդակությունը և այլն, որոնք բացառում են վարչահրամայական էությունը: Օրինակ, պացիենտի և բժշկական օգնություն իրականացնողի միջև, համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի, պետք է կնքվի վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր, որով պայմանագրի կողմերը համարվում են պատվիրատուն և կատարողը, այսինքն՝ հավասար սուբյեկտներ են:

Այսպիսով, բժշկական օգնության և սպասարկման տրամադրման հետ կապված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումն ապահովվում է իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով՝ սահմանադրական, քաղաքացիական, վարչական, քրեական, ընտանեկան, քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության իրավունք և այլն:

Նշենք նաև, որ առողջապահության մասին հատուկ օրենսդրական ակտերում առկա մի շարք հասկացություններ և իրավական կատեգորիաներ ներառված չեն և չեն օգտագործվում ո՛չ քաղաքացիական, ո՛չ վարչական օրենսդրության մեջ:

Վերը մատնանշված փաստերը գիտնականների շրջանում քննարկում են առաջացրել այսպես կոչված «առողջապահական իրավունքի» (բժշկական) բովանդակության որպես իրավական դիսցիպլին սահմանելու շուրջ:

Մի ժամանակ Լ.Ի. Դեմբոն կարծիք հայտնեց այն մասին, որ բժշկական իրավունքը բաղկացած է երեք մասից՝ ա) սոցիալական և սանիտարական, բ) բժշկական և բուժական օրենսդրություն, գ) բժշկի կարգավիճակը կարգավորող նորմեր¹:

Իվանովայի և Տարասովայի տեսակետի համաձայն՝ առողջապահական իրավունքը «սոցիալական ապահովության իրավունքի ենթաճյուղ է»²:

Տիխոմիրովը նշում է, որ «... նախ՝ չլինելով սահմանաված և/կամ ճանաչված իրավունքի ճյուղ՝ բժշկական իրավունքն արդեն փաստացի գոյություն ունի. երկրորդ՝ առողջապահական իրավունքի՝ որպես իրավական ինստիտուտի բացակայությունը խոչընդոտում է իրավակիրառ պրակտիկայի զարգացումը»³:

Ակուպովը առողջապահական իրավունքը ընկալում է որպես «քաղաքացու և բժշկական հաստատության, պացիենտի և բուժաշխատողի հարաբերությունները կազմակերպչական ոլորտում, ինչպես նաև՝ ախտորոշիչ, բժշկական, սանիտարահիգիենիկ միջոցառումների հետ կապված որոշակի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվությունը կարգավորող իրավադրույթների ամբողջություն»⁴:

Որոշ իրավաբաններ առողջապահական իրավունքը համարում են իրավունքի համալիր ճյուղ, որի առանցքը բժշկական օգնության տրամադրման հետ կապված իրավահարաբերություններն են: Ճյուղային ռեժիմը բնութագրվում է հետևյալ բաղադրիչներով.

- ընդհանուր սկզբունքների և դրույթների առկայությունը, որոնք ներթափանցում են ոլորտի բովանդակության մեջ,

¹ Տե՛ս Դեմբո Л.И. Врачебное право // Санитарно-социальное законодательство. – СПб., 1914. – С. 7.

² Տե՛ս Иванова Р.И., Тарасова В.А. Предмет и метод права социального обеспечения. – М., 1983. – С. 107-108.

³ Տե՛ս Тихомиров А.В. Медицинское право: Практическое пособие. – М., 1998. – С. 9.

⁴ Տե՛ս Акопов В.И. Медицинское право в вопросах и ответах. – М., 2001. – с. 21.

- կարգավորման հատուկ միջոցների և մեթոդների առկայությունը:

Առողջապահական իրավունքի առարկան հասարակական այն հարաբերություններն են, որոնք ծագում են առողջապահական մարմինների և հիմնարկների գործունեության ընթացքում պետության և հասարակության կողմից իրենց հանձնարարված խնդիրների կատարման ժամանակ¹:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ առողջապահական իրավունքը իրավական նորմերի համակարգ է, որը կարգավորում է անձանց առողջության պաշտպանությունից բխող հարաբերությունները առողջապահության ոլորտի կառուցման, գործունեության և զարգացման, այդ թվում՝ բժշկական գործունեությունը կարգավորելու գործընթացում:

Այսպիսով, առողջապահական իրավունքը կարելի է համարել իրավունքի ինքնուրույն ճյուղ՝ հետևյալ հիմնավորումներով.

- Հասարակության կարիքի և պետական շահի առկայությունը յուրաքանչյուր անձի, հասարակության և պետության համար կենսականորեն կարևոր այնպիսի իրավական ճյուղի ինքնուրույն իրավական կարգավորման մեջ, ինչպիսին առողջապահությունն է:

- Իրավական կարգավորման ինքնուրույն առարկայի առկայությունը՝ իրավական կարգավորման հատուկ մեթոդի անհրաժեշտությունը,

- Իրավունքի հատուկ աղբյուրների առկայությունը և/կամ անհրաժեշտությունը,

- Միայն իրավունքի այս ճյուղին բնորոշ կոնկրետ հասկացությունների և կատեգորիաների առկայությունը:

Մասնագիտացման և իրավունքի անկախ ճյուղ համարելու նպատակն է, հաշվի առնելով հարաբերությունների առանձնահատկությունները, առավելագույնս լուսաբանել դիտարկվող ոլորտում սոցիալական վերափոխումների առանձնահատկությունները, նորությունն ու դիմամիկան և ներկայացնել դրանց որակական վիճակը²:

Քանի որ, ինչպես նշվեց, առողջապահական իրավունքը համալիր իրավունքի ճյուղ է, սակայն միաժամանակ իրավունքի ինքնուրույն ճյուղ, ուստի ներառում է թե՛ հանրային, թե՛ մասնավոր իրավունքի ճյուղերին հատուկ կարգավորումներ: Այս պատճառով էլ առողջապահական իրավունքի ճյուղը առաջնորդվում է թե՛ իմպերատիվ, թե՛ դիսպոզիտիվ մեթոդներով:

Առողջապահական իրավունքի աղբյուրները: Առողջապահական իրավունքի աղբյուրները այն նորմատիվ իրավական ակտերն են, որոնք ամրագրում և կանոնակարգում են առողջապահական ոլորտի իրավական նորմերը:

Հայաստանի Հանրապետությունում մարդու առողջության իրավունքն ամրագրված է սահմանադրորեն: ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:

Սահմանադրական այս իրավունքն անարգել իրականացնելու համար 1996 թ.-ին ընդունվել է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք), որը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները:

Բժշկական օգնություն և սպասարկում է համարվում բնակչությանը

¹ Տե՛ս **А. А. Мохов**, Медицинское право (правовое регулирование медицинской деятельности), Волгоград 2003 с. 41.

² Տե՛ս նույն տեղը, էջ 47:

խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, հարբժշկական և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցումը: Այսինքն, բժշկական օգնությունը բժշկական և ոչ բժշկական այն բոլոր միջամտությունների ամբողջությունն է, որոնք ուղղված են անձի առողջության պահպանմանը և բարելավմանը:

Հայաստանում բժշկական օգնության և սպասարկման ընդհանուր, մասնագիտական և նեղ մասնագիտական տեսակները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 27.03.2008 թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» թիվ 276-Ն որոշմամբ:

Յուրաքանչյուր պետության կարևորագույն գործառնություններից է ապահովել բժշկական օգնություն ստանալու մատչելիության իրավունքը ինչպես ֆիզիկական, այնպես էլ ֆինանսական առումով: Պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը, որի 04.03.2004 թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մասին» թիվ 318-Ն որոշմամբ սահմանվել են սոցիալական և հատուկ այն խմբերի ներկայացուցիչները, ովքեր իրավունք ունեն պետական միջոցների հաշվին անվճար կամ համավճարով բժշկական օգնություն և սպասարկում ստանալ: Սույն որոշմամբ նշվում են նաև այն բժշկական ծառայությունները, որոնց համար կարող է պետական պատվեր տեղադրվել: ՀՀ կառավարության կողմից սահմանվել են նաև սոցիալական և հատուկ այն խմբերը, հիվանդությունների ցանկը, որոնց դեպքում դեղերը տրամադրվում են անվճար, 50 կամ 30 տոկոս զեղչով, ինչպես նաև դեղերի տրամադրման կարգը (տե՛ս ՀՀ կառավարության 30.05.2019 թ. «Բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի և այն հիվանդությունների ցանկերը, որոնց դեպքում դեղերը շահառուներին հատկացվում են դրանց արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ, ինչպես նաև այդ բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների միջոցով դեղերի հատկացման և փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 23.11.2006 թ. թիվ 1717-Ն որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին» որոշում): Անվճար կամ մասնակի փոխհատուցմամբ տրվում են այն դեղերը, որոնք ընդգրկված են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17.03.2018 թ. «Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 14.05.2013 թ. թիվ 17-Ն հրամանն ուժը կորցրած ձանաչելու մասին» թիվ 07-Ն հրամանի մեջ:

Յուրաքանչյուր ոք ունի սերունդ տալու և առողջ սեռական կյանքով ապրելու իրավունք: **Մարդու վերարտադրողական իրավունքը** ևս ամրագրված է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով: Այսպես, 17-րդ հոդվածի համաձայն՝ մարդու վերարտադրողականության հետ կապված իրավունքները սահմանվում են «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքով:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանվում են նաև առանձին անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը: Այսպես, Օրենքը մեծածավալ իրավական կարգավորումներ է նախատեսում արտակարգ իրավիճակներում բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու վերաբերյալ, ինչը համարվում է «Բնակչության բժշկական օգ-

նության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի կարևորագույն փոփոխությունների մեկը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով արգելանքի վերցված, ձերբակալված և կալանավորված, ինչպես նաև ազատագրկման վայրերում պատիժ կրող անձինք իրավունք ունեն ստանալու բժշկական օգնություն և սպասարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով (Օրենքի 20-րդ հոդված):

Կալանավորված անձանց բժշկական օգնությունը կազմակերպվում է ՀՀ կառավարության սահմանված կարգով՝ համաձայն ՀՀ կառավարության 26.05.2006 թ. «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշման:

Ձինժառայողները և զորակոչիկներն իրավունք ունեն ստանալու բժշկական օգնություն և սպասարկում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով (Օրենքի 21-րդ հոդված): Սույն դրույթն ավելի մանրամասն կարգավորվում է ՀՀ կառավարության 12.04.2018 թ. թիվ 405-Ն որոշման մեջ: Հավելյալ նաև, որ ՀՀ կառավարության 318-Ն որոշմամբ զորակոչային տարիքի անձինք և զինժառայողները և նրանց հավասարեցված անձինք, նրանց ընտանիքների անդամները, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինժառայողների ընտանիքների անդամները, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինժառայողները պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեն:

Օրենքով սահմանվում է նաև Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը (հոդված 23): Վերջիններիս թվին են պատկանում նաև ապաստան հայցողները և նրանց հավաստեցված անձինք, ովքեր պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեն՝ համաձայն ՀՀ կառավարության 318-Ն որոշման, որով ամրագրված է բնակչության սոցիալական և հատուկ խմբերի ցանկը:

Առողջապահության մի շարք ոլորտներ կանոնակարգված են օրենքներով: Այսպես, մարդու հոգեկան առողջությանը վերաբերող հարցերը ներառված են «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի մեջ: Սույն օրենքը կարգավորում է մարդու հիմնարար անձնական բարիք համարվող հոգեկան առողջության, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված հարաբերությունները, կանոնակարգում է հոգեկան առողջության ոլորտում միջազգային իրավունքի նորմերով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայով և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծման գործընթացները:

Ինչ վերաբերում է բժշկական այնպիսի գործընթացներին, ինչպիսիք են մարդու արյան փոխներարկումը և օրգան/հյուսվածքների փոխպատվաստումը, ապա վերջիններս կանոնակարգվում են «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» և «Մարդու օրգաններ և/կամ հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքներով:

Առողջապահական իրավունքի կարևորագույն և ընդգրկուն ոլորտներից է հանրային առողջապահությունը, որը սահմանվում է որպես «սոցիալական ջանքերով հիվանդությունների կանխարգելման, կյանքի երկարացման և առողջության խթանման արվեստ և գիտություն»: Հասարակական առողջության կարողությունների և

Ժառայությունների ամրապնդմանն ուղղված գործունեությունը նպատակ ունի ապահովել այնպիսի պայմաններ, որոնց շնորհիվ մարդիկ կարող են պահպանել իրենց առողջությունը, բարելավել առողջությունն ու բարեկեցությունը կամ կանխել առողջության վատթարացումը: Հանրային առողջապահությունն իր ողջ ներուժը կենտրոնացնում է ոչ միայն հիվանդությունների վերացման, այլ առողջության և բարեկեցության ողջ սպեկտրի վրա: Հանրային առողջապահական ծառայությունները ներառում են նաև անհատներին մատուցվող առանձին ծառայությունների ամբողջությունը, ինչպիսիք են պատվաստումները, վարքագծի կանոնակարգումը կամ առողջության վերաբերյալ խորհրդատվությունը¹: Հայաստանի Հանրապետությունում հանրային առողջապահությանը վերաբերող դրույթներ ներառված են «ՀՀ բնակչության սանիտարահամաձարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում: Վերջինս սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաձարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար:

Որպես առողջապահական իրավունքի աղբյուր կարող ենք նշել նաև «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ոչ միայն մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման, փխտորոշման և հսկողության իրականացման կարգը, այլ նաև դրա կանխարգելման կազմակերպական, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված են պետության քաղաքականության հիմնական նպատակները, որոնց թվին է դասվում նաև երեխաների անհատականության լիարժեք և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Սույն դրույթի բաղադրատարրերից է նաև երեխայի սնունդի և կրծքով կերարկման ապահովումը, որի վերաբերյալ իրավական կարգավորումները տեղ են գտել «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սնունդի շրջանառության մասին» ՀՀ օրենքում:

Դեղերի և թմրանյութերի հետ կապված իրավական կարգավորումները զետեղված են «Դեղերի մասին» և «Թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքներում:

РОЛЬ МЕДИЦИНСКОГО ПРАВА В ПРАВОВОЙ СИСТЕМЕ КАК ОТДЕЛЬНОЙ ОТРАСЛИ ПРАВА

Виктория Акопджанян

Аспирант кафедры конституционного права ЕГУ,

Заместитель директора по развитию и реформам

ЗАО "Национальный центр лечения зависимостей" Минздрава РА

Медицинское право - это область законодательства, которая включает правовые акты, регулирующие права и обязанности поставщиков медицинских услуг, медицинских работников, пациентов как при получении / оказании

¹ Տե՛ս հետևյալ հղմամբ <https://www.euro.who.int/en/health-topics/Health-systems/public-health-services>

медицинской помощи, так и при осуществлении их трудовых прав и обязанностей. Помимо этого, медицинское право может рассматриваться как совокупность правовых актов, так и как отдельная отрасль права, которая также считается междисциплинарным правом. Для обеспечения реализации и доступности права на здоровье необходимо иметь детальное представление о медицинском праве как об отдельной отрасли права. Необходимо изучить предмет, объект, субъекты правового регулирования, получить представление об источниках права и т. д. В рамках данной научной статьи медицинское право рассматривается как отрасль права.

THE ROLE OF HEALTH LAW IN THE LEGAL SYSTEM AS A SEPARATE BRANCH OF LAW

Viktorya Hakobjanyan

PHD Student of the YSU Chair of Constitutional Law,

Deputy Director for Development and Reforms at

"National Center for Addictions Treatment" MOH of RA CJSC

Medical law is an area of legislation that includes legal acts that regulate the rights and obligations of healthcare providers, healthcare professionals, patients, both in obtaining/ providing medical care and in exercising their labor rights and obligations. In addition to the fact that the law on health can be considered as a set of legal acts, but also as a separate branch of law with theoretical literature, which is also considered interdisciplinary law. To ensure the realization and accessibility of the right to health, it is necessary to have a detailed understanding of medical law as a separate branch of law. It is necessary to study the subject, object, subjects of legal regulation, get an idea about the sources of law, etc. Within the framework of this scientific article, medical law will be discussed as a branch of law.

Բանալի բառեր – առողջապահական իրավունք, հանրային առողջապահություն, իրավունքի ճյուղ, բժշկական օգնություն:

Ключевые слова: медицинское право, общественное здравоохранение, отрасль права, медицинская помощь.

Key words: Health law, public health, branch of law, medical assistance.